ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-ՏԽ-22/1.2

« 07 » հունվար 2022թ.

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեն, ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա.Նիկոյանի, որը գործում է ՀՀ քննչական կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԳՐԻՏԻԳ»ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Խ. Այվազյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **տեխնիկական հսկողության ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից՝ պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **900000 (ինը հարյուր հազար)** ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[22]

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **4** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ քննչական կոմիտե ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն, Հ/Հ 900011000834 ՀՎՀՀ 02631263 (ստորագրություն) Կ.Տ.	«ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ ՀՀ Արարատի մարզ, գ. Ոստան, Թեհլերյան 14 Հեռ.՝ (+374) 43-600-090 Էլ. Փոստ՝ gritig@inbox.ru ՀՎՀՀ 04229504 «Ամերիաբանկ» ՓԲԸ Հ/Հ 1570066216660100 (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 1
« 05 » « հունվար » 2022 թ. կնքված
ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-ՏԽ-22/1.2 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը**
2	71351540/502	Տեխնիկական հսկողության առայություններ **Հավելված 2*/**	դրամ	900000	1	ՀՀ Արմավիրի մարզ, քաղաք Վաղարշապատ, Մաշտոցի թիվ 81	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 01.08.2022թ.-ի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ձեռքբերվող Ծառայության նկարագիր

Ծառայության մատուցման ընդհանուր պահանջների

1. Տեխնիկական հսկողությունը պետք է իրականացվի պատվիրատուի կողմից տրամադրվող նախագծանախահաշվային փաստաթղթերի հիման վրա և պետք է ապահովի վերանորոգման աշխատանքների իրականացումը անհրաժեշտ որակով և ինժեներական նախագծերին, տեխնիկական առանձնահատկություններին և այլ պայմանագրային փաստաթղթերին համապատասխան:
2. Տեխնիկական հսկողության ծառայությունները պետք է իրականացվեն ՀՀ Քաղաքաշինության նախարարի 28.04.1998թ.-ի N44 հրամանով հաստատված շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգով և Պատվիրատուի կողմից տրամադրվող պարտականությունների շրջանակներում:
3. Տեխնիկական հսկողություն իրականացնողի հիմնական պարտականություններն են՝
• շինարարության սկզբից մինչև ավարտը ընկած ժամանակահատվածում պարբերաբար լուսանկարահանել շինարարության օբյեկտի վիճակը,
• ապահովել կատարվող աշխատանքների համապատասխանությունը կապալի պայմանագրի պայմաններին, շինարարական նորմերին և կանոններին,
• Կապալառուի կողմից պայմանագրային պարտավորությունների կատարման շեղում հայտնաբերելուց անհապաղ տեղեկացնել Պատվիրատուին՝ կցելով համապատասխան հիմնավորումը,
• ստուգել և հաստատել աշխատանքային և կատարողական փաստաթղթերը՝ նախապատրաստված Կապալառուի կողմից,
• ստուգել և վերահսկել նյութերի որակը և շինարարական աշխատանքների ընթացքը, որպեսզի ապահովվի մասնագրերին և պայմանագրային մյուս փաստաթղթերին համապատասխանությունը: Արգելել կամ փոփոխել այն նյութերը, որոնք չեն համապատասխանում անհրաժեշտ պայմաններին,
• վերահսկել և գնահատել շինաշխատանքների գործընթացը, որպեսզի ապահովվի շինաշխատանքների ավարտը՝ համաձայն պայմանագրի մեջ նշված ժամանակացույցի,
• ստուգել բոլոր այն փորձարկումների արդյունքները, որոնք անհրաժեշտ են որակի ապահովման համար: Ստուգել

բոլոր փաստաթղթերը (այդ թվում՝ բոլոր ծավալային չափերը և հաշվարկները), որոնք անհրաժեշտ են համապատասխան վճարումները իրականացնելու համար,

- կատարել որակի և քանակի ամենօրյա հսկումը (համապատասխան նշում կատարելով մատյանում), այն աշխատանքների անհրաժեշտ փորձարկումները, որոնք կատարվում են կապալի պայմանագրի իրականացման շրջանակում,
- շինարարության ժամանակ առաջացող խնդիրների դեպքում առաջարկել այն գործողությունները, որոնք անհրաժեշտ կլինեն աշխատանքային ժամանակացույցը պահպանելու համար,
- հսկել բոլոր այն հարցերը, որոնք կապված են շինաշխատանքներն անվտանգ իրականացնելու հետ և հրահանգել Կապալառուին տեղադրել նշաններ, լուսավորության անվտանգության սարքերի և այլ համապատասխան միջոցառումների իրականացման համար,
- կատարել անհրաժեշտ օրական գրառումներ, որոնք անհրաժեշտ են պայմանագրի ընթացքի վերահսկման համար (ընդգրկելով կատարված աշխատանքների հավաստագրերը և այլ անհրաժեշտ փաստաթղթեր),
- կատարել աշխատանքների ծավալների չափագրումներ և մասնակցել կատարողական փաստաթղթերի կազմմանը և հաստատմանը,
- շինարարության ավարտից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին ներկայացնել Հաշվետվություն կատարված աշխատանքների վերաբերյալ՝ կցելով լուսանկարները, անհրաժեշտ գծագրերը, ծածկված աշխատանքների ակտերը, փորձարկման ակտերը, սերտիֆիկատները,
- Պատվիրատուի ցուցումով չափագրել կատարման ենթակա աշխատանքները:
- պարտադիր ներկա լինել քաղաքաշինության նախարարի թիվ 44 առ 28.04.1998թ. «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ» հրամանի հավելված 1-ով նախատեսված ծածկման շինմոնտաժային աշխատանքների իրականացման ընթացքում:

Հաշվետվության ներկայացման պահանջներ

Կատարողը պարտավոր է ներկայացնել Պատվիրատուին ծառայությունների վերաբերյալ ընթացիկ և ավարտական հաշվետվություններ, որոնք հանդիսանում են ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրությունները հիմնավորող փաստաթղթեր:

Ընթացիկ հաշվետվությունները ներկայացվում են պարբերաբար, ընդգրկելով իրականացված ծառայությունները և կատարված աշխատանքները հավաստող ու հիմնավորող տեխնիկական փաստաթղթերի պատճենները (համառոտ նկարագրություն տվյալ ժամանակահատվածում իրականացված շինարարական աշխատանքների և տեխ.հսկողության ծառայությունների վերաբերյալ, լաբորատոր փորձարկումների արդյունքներ, նյութերի, կոնստրուկցիաների որակի համապատասխանության հավաստագրեր, ծածկված (միջանկյալ) աշխատանքների ընդունման ակտեր, նախքան շինարարության սկիզբը, ինչպես նաև ծածկված (միջանկյալ) աշխատանքների լուսանկարներ:

Ավարտական հաշվետվությունը պետք է ընդգրկի հետևյալ փաստաթղթերի պատճենները՝ ավարտական կատարողական փաստաթղթեր, ամփոփ նկարագրական տեղեկանք իրականացված շինարարական աշխատանքների ամբողջ ժամանակահատվածի համար, նախքան շինարարության սկիզբը, ինչպես նաև ավարտված շինարարական օբյեկտի լուսանկարներ:

Ընթացիկ հաշվետվությունները նաև ներկայացվում են շինարարական աշխատանքների յուրաքանչյուր կատարողական արձանագրությունը Ծառայություն մատուցողի կողմից ստորագրելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում՝ Ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրությունների հետ մեկտեղ:

Ավարտական հաշվետվությունը ներկայացվում է շինարարական աշխատանքների ավարտական կատարողական արձանագրությունը Ծառայություն մատուցողի կողմից ստորագրելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Հավելված 2*, 2-րդ չափաբաժին

Ծավալաթերթ-Նախահաշիվ

ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի քննչական շենքի վերանորոգման աշխատանքների կատարման

N	Աշխատանքների տեսակները և անվանումը	Չ/Մ	Քանակ
1	2	3	4
	1. Շինարարական աշխատանքներ		
	Քանդման աշխատանքներ		
1	Դռան բլոկի ապամոնտաժում	մ²	31,50
2	Պատուհանների ապամոնտաժում	մ²	41,80
3	Պատերից և շեպերից հին սվաղի մաքրում	մ²	1652,3
4	Պատերից կերամիկական սալերի քանդում	մ²	114,80
5	Կերամիկական հատակի քանդում	մ²	14,71
6	Լամինատե հատակների քանդում	մ²	322,72
7	Ճակատներից հին երեսաքարի քանդում	մ³	3,40
8	Շին աղբի տեղափոխում շենքից դուրս	տ	55,0
9	Առաջացած շին. աղբի բարձում, տեղափոխում 3կմ հեռ.վրա	տ	55,0
	Ներքին հարդարման աշխատանքներ		
	Նկուղ		
1	Պատերի բարձրորակ սվաղում ցեմ/ավազային սվաղով	մ²	309,09
2	Պատերի ծեփամածկում և կրաներկում	մ²	309,09
3	Պլաստիկե առասաղի իրականացում, մետաղական պրոֆիլի վրա	մ²	216,16
4	Մետաղական դռան պատրաստում և տեղադրումով	կգ	575,00
5	Խարիսխ M16, L=200մմ	հատ	6
6	Խարիսխ M10, L=200մմ	հատ	4
7	Ավազ	մ³	0,028
8	Ջերմամեկուսացում ապակեբամբակով 50մմ հաստ	մ³	0,14
9	Մետաղական տարրերի երկշերտ ներկում	մ²	5,6
10	Կողպեք կախովի	հատ	1
11	Մետաղապլաստե, դուռ (արտերկիր-պրոֆիլ)	մ²	3,15
12	Մետաղապլաստե, բլոկով, սպիտակ, 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ, պրոֆիլ (արտերկիր), բացվող	մ²	0,80
	Արտաքին հարդարում		
1	Պատերի երեսպատում բազալտե սալերով 3սմ հաստ	մ²	3,40
2	Թասակի տեղադրում 80x30մմ բազալտե քարերով -4մ	մ²	0,32
3	Պատուհանագոգերի տեղադրում 300մմ կտրվածքով մետաղական թաղանթով -2,0մ	մ²	0,60

4	Շեպերի բարձրորակ սվաղում ցեմ/ավազային սվաղով	մ²	2,90
5	Դռների և պատուհանների շեպերի բարձրորակ սվաղում ցեմ/ավազային սվաղով	մ²	1,71
	1-ին հարկ		
1	Գոյություն ունեցող բացվածքի փակում պեմզաբլոկով	մ³	0,4
2	Նոր կառուցվող պատերի h=100մմ հաստ պեմզաբլոկով	մ²	74,2
3	Պատերի բարձրորակ սվաղում ցեմ/ավազային սվաղով	մ²	792,43
4	Պատերի ծեփամածկում և լատեքսային ներկում	մ²	792,43
5	Պլաստիկե առասաղի իրականացում, մետաղական պրոֆիլի վրա	մ²	8,07
6	Գիպսաստվարաթղթե առասաղի իրականացում, մետաղական պրոֆիլի վրա	մ²	201,36
7	Մետաղապլաստե, դուռ (արտերկիր-պրոֆիլ)	մ²	26,24
8	Մետաղապլաստե, բլոկով, սպիտակ, 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ, պրոֆիլ (արտերկիր), բացվող	մ²	19,80
	Հատակներ 1-ին հարկ		
1	Ջերմամեկուսիչ շերտ h=30մմ Հ-1	մ³	4,58
2	Ցեմենտավազային հարթեցնող d=30մմ շերտ Հ-1	մ²	152,74
3	Լամինատե ծածկույթի իրականացում 8մմ հաստությամբ ներառյալ պարալոնի շերտը	մ²	152,74
4	Ցեմենտավազային հարթեցնող d=30մմ շերտ Հ-2	մ²	44,55
5	Կերամոգրանիտե սալիկների իրականացում, ամրացված սոսնձով Հ-2	մ²	44,55
6	Ցեմենտավազային հարթեցնող d=30մմ շերտ Հ-3	մ²	8,07
7	Կերամիկական սալիկների իրականացում, ամրացված սոսնձով Հ-32	մ²	8,07
	Արտաքին հարդարում		
1	Պատուհանագոգերի տեղադրում 300մմ կտրվածքով մետաղական թաղանթով -18,5մ	մ²	5,55
2	Շեպերի բարձրորակ սվաղում ցեմ/ավազային սվաղով	մ²	32,08
3	Դռների և պատուհանների շեպերի բարձրորակ սվաղում ցեմ/ավազային սվաղով	մ²	18,64
	2-րդ հարկ		
1	Գոյություն ունեցող բացվածքի փակում պեմզաբլոկով	մ³	0,8
2	Նոր կառուցվող պատերի h=100մմ հաստ պեմզաբլոկով	մ²	9,9
3	Նոր բացվածքի իրականացում	մ³	0,8
4	Պատերի բարձրորակ սվաղում ցեմ/ավազային սվաղով	մ²	684,70
5	Պատերի ծեփամածկում և լատեքսային ներկում	մ²	684,70

6	Պլաստիկե առասաղի իրականացում, մետաղական պրոֆիլի վրա	մ^2	6,64
7	Գիպսաստվարաթղթե առասաղի իրականացում, մետաղական պրոֆիլի վրա	մ^2	196,29
8	Մետաղապլաստե, դուռ (արտերկիր-պրոֆիլ)	մ^2	14,70
9	Մետաղապլաստե, բլոկով, սպիտակ, 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ, պրոֆիլ (արտերկիր), բացվող	մ^2	16,20
	Հատակներ 2-րդ հարկ		
1	Ջերմամեկուսիչ շերտ h=30մմ Հ-1	մ^3	5,10
2	Ցեմենտավազային հարթեցնող d=30մմ շերտ Հ-1	մ^2	169,98
3	Լամինատե ծածկույթի իրականացում 8մմ հաստությամբ ներառյալ պարալոնի շերտը	մ^2	169,98
4	Ցեմենտավազային հարթեցնող d=30մմ շերտ Հ-2	մ^2	26,31
5	Կերամոգրանիտե սալիկների իրականացում, ամրացված սոսնձով Հ-2	մ^2	26,31
6	Ցեմենտավազային հարթեցնող d=30մմ շերտ Հ-3	մ^2	6,64
7	Կերամիկական սալիկների իրականացում, ամրացված սոսնձով Հ-32	մ^2	6,64
8	Պլաստմասե շրիշակների իրականացում h=6սմ	մ	321,1
9	Կերամոգրանիտե շրիշակների կառուցում ամրացված սոսնձով h=8սմ	մ^2	7,20
	Արտաքին հարդարում		
1	Պատուհանագոգերի տեղադրում 300մմ կտրվածքով մետաղական թաղանթով -21,0մ	մ^2	6,30
2	Շեպերի բարձրորակ սվաղում ցեմ/ավազային սվաղով	մ^2	36,96
3	Դռների և պատուհանների շեպերի բարձրորակ սվաղում ցեմ/ավազային սվաղով	մ^2	24,48
	Ծածկարան		
1	Մետաղական տարերի իրականացում	տ	0,033
2	Ծածկարանի տանիքի իրականացում 0,55մմ հաստությամբ պրոֆիլավոր թիթեղից KP25	մ^2	13,44
3	Ջրատար խողովակ 100x100	մ	3,15
4	Ծածկարանի երեսապատում ալյումաբոնդով ներոյալ մետաղական պրոֆիլները	մ^2	10,6
5	Պլաստիկե առասաղի իրականացում, մետաղական պրոֆիլի վրա	մ^2	13,40
6	Մետաղական ֆերմաների ՄՖ-1	տ	0,05
7	Մետաղական կանգնակների և հենարանների պատրաստում և տեղադրում ՄԿ-1, ՄԿ-2, ՄՀ-1, ՄՀ-2	տ	0,195
8	Ծածկոցի բետոնե հիմքեր B15 դասի բետոնով	մ^3	0,192
9	Ամրան Ac I	տ	0,004

10	Ամրան A500c	տ	0,021
11	Էլաստիկ նյութ	մ³	0,112
12	Տանիքի փայտե տարրերի պատրաստում և տեղադրում (մասնակի վերանորոգում)	մ³	1,27
13	Փայտյա տարրերի հրապաշտպանություն	մ³	1,27
	Սալվածք		
1	Բազալտե եզրաքարերի տեղադրում 15x30սմ	մ	63,7
2	Մայթի սալահիկների իրականացում	մ²	60,50
3	Բետոն B15 դասի բետոնով	մ³	7,3
4	Խճի շերտի իրականացում	մ³	3,0
	Ընդամենը		
	2. Ներքին սառը տաք ջրամատակարարում		
1	Կենտրոնախույս պոմպ Q=2,5լ/վ, H=20մ, N=1,1կՎտ	կոմպ	2
2	Պոլիէթիլենե բաք 1մ³ ծավալով	հատ	1
3	Լողանային փական Φ25	հատ	2
4	Պոլիպրոպիլենե խողովակների տեղադրում PPR Φ32x4,4 PN20 փորձարկումով	մ	22,0
5	Պոլիպրոպիլենե խողովակների տեղադրում PPR Φ25x3,5 PN20 փորձարկումով	մ	22,0
6	Պոլիպրոպիլենե խողովակների տեղադրում PPR Φ20x2,8 PN20 փորձարկումով	մ	65,0
7	Պոլիպրոպիլենե խողովակների տեղադրում PPR Φ16x2,0 PN20 փորձարկումով	մ	6,0
8	Գնդային փական Φ32, մոնտաժումով	հատ	6
9	Գնդային փական Φ25, մոնտաժումով	հատ	4
10	Գնդային փական Φ20, մոնտաժումով	հատ	6
11	Անկյունային փական Φ15, մոնտաժումով	հատ	12
12	Կցորդիչ պոլիպ. և պողպատե խողովակների միացման համար Φ50	հատ	2
13	Ճկուն խողովակ սանիտարական սարքերի միացման համար Φ15, L=0,6մ	հատ	12
14	Ջերմամեկուսացում ռետինե խողովակներ 9մմ հաստ- de32 խողովակի համար	մ	22,0
15	Ջերմամեկուսացում ռետինե խողովակներ 9մմ հաստ- de25 խողովակի համար	մ	22,0
16	Ջերմամեկուսացում ռետինե խողովակներ 9մմ հաստ- de20 խողովակի համար	մ	65,0
17	Ջերմամեկուսացում ռետինե խողովակներ 9մմ հաստ- de16 խողովակի համար	մ	6,0
18	Պողպատե էլեռակցվող խողովակ DN57x3մմ մոնտաժումով, փորձարկումով	մ	18,0

19	Պողպատե DN50 խողովակների ձևավոր մասեր -7հատ	կգ	5,6
20	Կախիչ խողովակները ծածկի ե/բ սալից կախելու համար	հատ	5
21	Պարուրակաձև ձող կախիչի համար M10 տիպի	մ	2,5
22	Հակահրդեհային արկղ, տեղադրումով	կոմպլ.	3
	ա. Հակահրդեհային արկղ, 814x814x192	հատ	3
	բ. Հակահրդեհային ծորակ, DN50	հատ	3
	գ. Հակահրդեհային ռետինե խողովակ երկկողմանի արագ կցվող կիսամանեկներով, Φ50, L=20մ,	մ	60,0
	դ. Բրանցպոյտ, Φ16	հատ	3
	ե. Ձեռքի փրփրային կրակմարիչ	հատ	3
23	Մետաղական տարրերի երկշերտ ներկում	մ²	0,1
24	Համակարգի լվացում և ախտահանում	մ	133,0
	Ընդամենը		
	3. Կենցաղային կոյուղի		
1	Զուգարանակոնք հատակին տեղադրվող լվացման բաքով	կ-տ	4
2	Լվացարան կերամիկական 550x450մմ խառնիչով	կ-տ	4
3	Պոլիվինիքլորիդե կոյուղու խողովակների տեղադրում Φ=110, ռետինե սեղմիչ օղակներով փորձարկումով	մ	52,0
4	Պոլիվինիքլորիդե կոյուղու խողովակների տեղադրում Φ=50, ռետինե սեղմիչ օղակներով փորձարկումով	մ	10,0
5	Պոլիվինիքլորիդե խողովակների ձևավոր մասեր d=110մմ	հատ	29
6	Պոլիվինիքլորիդե խողովակների ձևավոր մասեր d=50մմ	հատ	13
7	Ստուգիչ d=110մմ	հատ	4
8	Մետաղական խողովակ DN300, L=0,3մ կոյուղու օդափոխության խողովակի ելք տանիքից -2տեղ	մ	0,6
	Ընդամենը		
	4. Ջեռուցում		
1	Կոնդենսացիոն տուրբո գազի կաթսա 28ԿՎտ	կ-տ	1
2	Կոնդենսացիոն տուրբո գազի կաթսա 24ԿՎտ	կ-տ	1
3	Ծխատար խողովակ	հատ	2
4	Գնդային փական 3/4 տեղադրումով	հատ	4
5	Գնդային փական 1/2 տեղադրումով	հատ	4
6	Ջրի ցանցավոր զտիչ 3/4	հատ	2
7	Պոլիպրոպիլենե խողովակների ձևավոր մասեր Φ15-Φ25	հատ	4
8	Կաթսայի կախիչ	հատ	2

9	Ալյումինե մարտկոց 1 սեկցիան 130վատ, H=0,5մ 295 սեկցիա	էքմ	82,6
10	Ալյումինե լավորակ մարտկոցի արժեքը	սեկցիա	295,0
11	Ջեռուցման մարտկոցի կոմպլեկտ	հատ	27
12	Ջեռուցման մարտկոցի փական 1/2″ վերևի	հատ	27
13	Ջեռուցման մարտկոցի փական 1/2″ ներքևի	հատ	27
14	Պոլիպրոպիլենե խողովակների ձևավոր մասեր Φ20	հատ	54
15	Պոլիպրոպիլենե խողովակների տեղադրում PPR Φ20x2,8 PN20 փորձարկումով	մ	68,0
16	Պոլիպրոպիլենե խողովակների տեղադրում PPR Φ25x3,5 PN20 փորձարկումով	մ	200,0
17	Պոլիպրոպիլենե խողովակների տեղադրում PPR Φ32x4,4 PN20 փորձարկումով	մ	12,0
18	Խողովակների ամրակապիչներ 20-50մմ	հատ	314
19	Պոլիպրոպիլենե խողովակների ձևավոր մասեր Φ20-32	հատ	336
20	Անցքերի բացում ծածկերում, միջորմներում և պատերում 150x150	տեղ	52
21	Անցքերի փակում	մ3	0,350
22	Խողովակի փորձարկում	մ	280,0
	Ընդամենը		
	5. Օդափոխություն և օդորակում		
	Օդափոխություն		
1	Սանհանգույցի առասաղային օդամուղ Φ150 200մ3/ժամ P=70ՊԱ փորձարկում, կարգաբերումով	հատ	1
2	Սանհանգույցի առասաղային օդամուղ Φ125 100մ3/ժամ P=50ՊԱ փորձարկում, կարգաբերումով	հատ	4
3	Ճկուն օդատար Φ150	մ	10,0
4	Ճկուն օդատար Φ125	մ	26,0
5	Գլխանոց Φ125	հատ	4
6	Գլխանոց Φ150	հատ	1
7	Մոնտաժման նյութեր	կգ	5,0
8	Անցքերի բացում ծածկերում, միջորմներում և պատերում 150x150	տեղ	6
9	Անցքերի փակում	մ3	0,050
	Օդորակում		
1	Պղնձե խողովակների d=6,35 մոնտաժում փորձարկումով	մ	6,0
2	Պղնձե խողովակների d=12,7 մոնտաժում փորձարկումով	մ	6,0
3	Մալուխ 5x1,5մմ^2	մ	8,0

4	Մոնտաժման նյութեր	կգ	10,0
5	Անցքերի բացում պատերում 150x150	տեղ	2
6	Անցքերի փակում	մ3	0,020
	Ընդամենը		
	6. Էլեկտրականություն		
1	Մետաղյա բաշխիչ վահան 400x300x150մմ 24(18) մոդուլ արտաքին մոնտաժի	հատ	1
2	Բաշխիչ վահանակ 24 մոդուլի	լրակ.	2
3	Ավտոմատ անջատիչ 1x10	հատ	5
4	Ավտոմատ անջատիչ 1x16	հատ	15
5	Ավտոմատ անջատիչ 1x25	հատ	26
6	ԲՎ 30ՄԱ պաշտպանիչ անջատման սարքավորում 1x25Ա	հատ	2
7	Ավտոմատ անջատիչ 1x40	հատ	1
8	Ավտոմատ անջատիչ 1x50	հատ	2
9	Ավտոմատ անջատիչ 1x63	հատ	1
10	Ավտոմատ անջատիչ 1x80	հատ	1
11	Իմպուլսային գերլարումից պաշտպանիչ սարք	հատ	1
12	Մեկուսիչ ժապավեն	հատ	50
13	Պոլիվինիլքլորիդե խողովակ Φ20մմ	մ	1000,0
14	Պոլիվինիլքլորիդե ճկախողովակ Φ20մմ	մ	800,0
15	PVC խողովակի ամրակ Φ20մմ	հատ	3000
16	PVC խողովակի անկյունակ Φ20մմ	հատ	250
17	PVC խողովակ Φ50	մ	15,0
18	80x80x75մմ PVC խողովակի միացման տուփ	հատ	300
19	160x110x75մմ PVC խողովակի միացման տուփ	հատ	80
20	Պողպատ գոտի 60x5 հողանցման գոտի	մ	1,0
21	Պողպատ գոտի 40x4 հողանցման գոտի	մ	40,0
22	Մետաղյա անկյունակ 70x70x5 ցինկապատ պողպատից	հատ	8
23	Φ16 AIII ամրան 2հատ L=1500մմ	կգ	37,9
24	Մալուխ պղնձե ջիղերով, մեկուսացված հատվածքը 3x1,5մմ^2 ВВГ-LS	մ	400,0
25	Մալուխ պղնձե ջիղերով, մեկուսացված հատվածքը 3x2,5մմ^2 ВВГ-LS	մ	500,0
26	Մալուխ պղնձե ջիղերով, մեկուսացված հատվածքը 3x4մմ^2 ВВГ-LS	մ	850,0
27	Մալուխ պղնձե ջիղերով, մեկուսացված հատվածքը 3x10մմ^2 ВВГ-LS	մ	11,0
28	Մալուխ պղնձե ջիղերով, մեկուսացված հատվածքը 3x16մմ^2 ВВГ-LS	մ	15,0

29	Մալուխ պղնձե ջիղերով, մեկուսացված հատվածքը 3x35մմ² ВВГ-LS	մ	15,0
30	10մմ² հաղորդալարի ծայրակալ	հատ	10
31	16մմ² հաղորդալարի ծայրակալ	հատ	10
32	35մմ² հաղորդալարի ծայրակալ	հատ	10
33	Տուփ անջատիչների և վարդակների տեղադրման համար	հատ	124
34	Մեկդիքային շրջանակ վարդակների և անջատիչների համար	հատ	77
35	Երկդիքային շրջանակ վարդակների և անջատիչների համար	հատ	25
36	Չորսդիքային շրջանակ վարդակների և անջատիչների համար	հատ	22
37	16Ա բաժանիչ տուփով մեկդիրքային վարդակ	հատ	151
38	16Ա բաժանիչ տուփով մեկդիրքային վարդակ IP տարբերակի	հատ	4
39	16Ա բաժանիչ տուփով մեկդիրքային անջատիչ	հատ	33
40	16Ա բաժանիչ տուփով երկդիրքային անջատիչ	հատ	5
41	RJ45 ինվենտորային վարդակ	հատ	22
42	A1 տիպի կետային լուսավորության սարք IP44	հատ	8
43	Լուսավորության սարք 600x600մմ -40Վտ	հատ	62
44	Լուսավորության սարք 1200x800մմ LED տիպի -36Վտ	հատ	21
45	Լուսավորության սարք PIR տվիչով	հատ	2
46	Վթարային մարտկոցով համալրված լուսավորության սարք	հատ	6
47	Վթարային մարտկոցով համալրված առաստաղի լուսավորության սարք	հատ	2
	Ընդամենը		
	7. Հակահրդեհային համակարգ		
1	Ծխի դետեկտոր	հատ	32
2	Ձեռքի գործարկվող կանչ	հատ	3
3	Շչակ և ստրոբ բարձրախոս	հատ	4
4	Ձայնային ինտերֆեյս սարքավորում	հատ	1
5	Աին տիպի մոդուլ	հատ	1
6	Հակահրդեհային ազդանշանային համակարգի վահանակ	լրակ.	1
7	Վերահսկող համակարգիչ	լրակ.	1
8	ՀՀ ազդանծանային վահանակ ընդունարանում	լրակ.	1
9	Մալուխ 2x0,8 FRLS	մ	300,0
10	Պոլիվինիլքլորիդե ճկախողովակ Φ20մմ	մ	300,0
11	PVC խողովակի ամրակ Φ20մմ	հատ	400

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ քննչական կոմիտե
ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն,
Հ/Հ 900011000834
ՀՎՀՀ 02631263

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ
ՀՀ Արարատի մարզ, գ. Ուստան, Թեհլերյան 14
Հեռ.՝ (+374) 43-600-090
Էլ. Փոստ՝ gritig@inbox.ru
ՀՎՀՀ 04229504
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570066216660100

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 2
« » « դեկտեմբեր » 2021 թ. կնքված
ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-ՏԽ-22/1.2 *ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
2	71351540/502	Տեխնիկական հսկողության ծառայություններ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ քննչական կոմիտե
ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն,
Հ/Հ 900011000834
ՀՎՀՀ 02631263

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ
ՀՀ Արարատի մարզ, գ. Ուստա, Թեհլերյան 14
Հեռ.՝ (+374) 43-600-090
Էլ. Փոստ՝ gritig@inbox.ru
ՀՎՀՀ 04229504
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 15700662166601000

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 3
« » « դեկտեմբեր » 2021 թ. կնքված
ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-ՏԻՍ-22/1.2 *ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » « դեկտեմբեր » 2021 թ. կնքված
ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-ՏԽ-22/1.2 *ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն